Պայմանագիր

Մաքսային միջնորդական ծառայությունների մատուցման

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան **«12» Օգոստոս 2026թ.**

«Բիզնես Բրոք» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Միհեր Մաթևոսյանի, գործելով ընկերության կանոնադրության դրույթներով, այսուհետ՝«Կատարող», մի կողմից, և «ՀՀ Ներքին Գործերի Նախարարություն» ՊՄ-ն, գործելով ընկերության կանոնադրության (կամ լիազորագրի) դրույթներով, այսուհետ՝ «Պատվիրատու», մյուս կողմից, «Կատարողը» և «Պատվիրատուն» պայմանագրի տեքստում միասին հիշատակվելիս՝«Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան, ժամկետը և գինը

1.1. Պայմանագրով պատվիրատուն պատվիրում, իսկ կատարողը պարտավորվում է պատվիրատուին մատուցել վերջինիս կողմից ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և/կամ տրանսպորտային միջոցների (այսուհետ նաև՝ բեռ) մաքսային ձևակերպումներին ուղղված գործողություններից մաքսային հայտարարագրի (այսուհետ՝ ՄՀ) կազմման և մաքսային մարմին դրա ներկայացման և ընդունման ծառայությունը՝պատվիրատուի տրամադրած փաստաթղթերի, հայտարարած գրավոր կամ բանավոր տեղեկությունների հիման վրա, որոնք անմիջապես պետք է արտացոլվեն ՄՀ-ում, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել նշված ծառայության արդյունքը և վճարել դրա համար՝համաձայն կատարողի ներկայացրած հարկային հաշվի:

1.2. Բեռի մաքսային ձևակերպումներին ուղղված այլ գործառույթներն, ինչպիսիք են՝ ՄՀ-ի կազմման նպատակով բեռին վերաբերող փաստաթղթերի ստանալն ու ներկայացնելը, բեռի նախնական զննումը, հայտարարագրման ենթակա և կատարողին ներկայացվելիք փաստացի տվյալների ճշգրտումը, մաքսային և/կամ այլ վճարների կատարումը, մաքսային մարմինների կողմից բեռի բացթողումն ու այլ գործողությունները, կարող են կատարվել Կողմերի միջև լրացուցիչ համաձայնությամբ:

1.3. Ծառայության մատուցման ժամկետն է՝**«12» օգոստոս 2026թ.**-ից մինչև **«31» դեկտեմբերի 2031թ.**:

1.4. Ծառայությունը մատուցված, իսկ դրա արդյունքը՝համապատասխանաբար հանձնված և ընդունված է համարվում կողմերի միջև հարկային հաշիվը ստորագրվելու և հաստատվելու պահից:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1. **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1. Պահանջել Կատարողից պատշաճ, ժամանակին և ամբողջական կատարելու Պայմանագրով ստանձնած պարտավորությունները.

2.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել մատուցվող Ծառայության ընթացքն ու որակը և դրա համապատասխանությունը Պայմանագրի դրույթներին.

2.1.3. Ծառայության ընթացքի վերաբերյալ տեղեկություններ ստանալ Կատարողից՝ չխոչընդոտելով վերջինիս գործունեությանը.

2.1.4. Իրականացնել Պայմանագրով և օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

2.2. **Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1. Ընդունել Մաքսային ներկայացուցչի կողմից մատուցված Ծառայությունը և վճարել դրա համար նախատեսված գինը Պայմանագրի «1.4.» կետով նախատեսված կարգով, իսկ Ծառայության մատուցումից հրաժարվելու դեպքում՝ վճարել մինչ հրաժարման պահը Մաքսային ներկայացուցչի մատուցած Ծառայության համար համապատասխան ծավալով, առկայության դեպքում՝ հատուցելով նաև վերջինիս կատարած փաստացի ծախսերը.

2.2.2. Իր կողմից ընտրված/որոշված մաքսային ընթացակարգով բեռի հայտարարագրման շրջանակներում օրենսդրությամբ նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել առաջացող մաքսային վճարների վճարման պարտականությունը.

2.2.3. ՄՀ-ի կազմման գործընթացը սկսելուց առաջ ՄՀ-ով հայտարարագրվող բեռի վերաբերյալ Մաքսային ներկայացուցչին ներկայացնել հավաստի, ճշգրիտ և բնօրինակ առևտրային, տրանսպորտային (փոխադրման) և այլ փաստաթղթեր:

2.2.4. Պատշաճ, բարեխղճորեն և ժամանակին իրականացնել Պայմանագրով և օրենսդրությամբ նախատեսված այլ պարտավորություններ/պարտականություններ:

2.3. **Կատարողին իրավունք ունի՝**

2.3.1. Պահանջել Պատվիրատուից պատշաճ, ժամանակին և ամբողջական կատարելու Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրով և օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերն ու տեղեկությունները ներկայացնելը/տրամադրելը, մաքսային և այլ վճարումները կատարելը.

2.3.2. Պահանջել Պատվիրատուից չխոչընդոտելու Ծառայության մատուցմանն ու իր գործունեությանը.

2.3.3. Պահանջել Պատվիրատուից վճարելու Ծառայության համար՝ իր կողմից ներկայացված վճարման վերաբերյալ համապատասխան փաստաթղթում նշված չափով՝ Պայմանագրով որոշված կարգով և ժամկետում.

2.3.4. Իրականացնել Պայմանագրով, և օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Կատարողը պարտավոր է ծառայությունը մատուցել սույն պայմանագրի դրույթներին համապատասխան և դուրս չգալ դրանով իրեն վերապահված իրավունքների ու ստանձնած պարտավորությունների շրջանակից:

2.4.2. Չօգտագործել Պատվիրատուի կողմից իրեն տրամադրված տեղեկություններն ու փաստաթղթերը Պայմանագրի առարկայից տարբերվող նպատակներով:

2.4.4. Պատշաճ, բարեխղճորեն և ժամանակին իրականացնել Պայմանագրով և օրենսդրությամբ նախատեսված այլ պարտավորություններ/պարտականություններ: Ընդ որում՝ Կատարողի պարտականությունների մեջ չի մտնում այնպիսի մաքսային գործառնությունների իրականացումը, որոնք կապված են հայտարարագրված մաքսային ընթացակարգերի պահանջների և պայմանների կատարման հետ, ինչպես նաև այլ պարտականություններ, որոնք օրենսդրությամբ դրվում են միայն Հայտարարատուի վրա:

3. Կատարողի կարգավիճակը և պատվիրատուի հայտարարությունը

3.1. Ծառայությունը մատուցելիս կատարողը որպես հայտարարատու (մաքսային միջնորդ) հանդես է գալիս ապրանքներ տեղափոխող անձի (պատվիրատուի) անունից և նրա հաշվին: ՄՀ-ն՝ որպես իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթուղթ, գույքային, իրավական և ցանկացած այլ առումով իրավունքներ և պարտականություններ է առաջացնում անմիջապես պատվիրատուի (մաքսային մարմնում ներկայացվողի) համար: Կատարողին տրամադրված փաստաթղթերի և/կամ տեղեկությունների, ինչպես նաև հայտարարագրված տեղեկությունների ճշտության համար պատասխանատու է պատվիրատուն:

Ի հավելումն սույն կետում նշվածի, կատարողը պատասխանատվություն չի կրում պատվիրատուի կողմից պայմանագրի որևէ դրույթի խախտման արդյունքում ի հայտ եկած հետևանքների համար նաև վերջինիս առջև:

3.2. Կնքելով սույն պայմանագիրը, պատվիրատուն հայտարարում է, որ ՀՀ մաքսային օրենսդրության համաձայն ինքը պատասխանատվություն է ստանձնում ՄՀ-ի կազմման նպատակով իր կողմից կատարողին տրամադրված փաստաթղթերի և հայտնված տեղեկությունների հավաստիության, իսկության, ճշմարտացիության և լրիվության համար և երաշխավորում է դրանց արժանահավատ լինելը, որպիսիք համապատասխանում են բեռի իրական պարունակությանը: Ընդ որում, պատասխանատվության նման ստանձնումը չի սահմանափակվում ժամանակի մեջ:

4. Վճարման կարգը

4.1. Մատուցվող ծառայության գումարը ամրագրվում է հարկային հաշվում, որը պատվիրատուն պարտավոր է վճարել ծառայությունը մատուցելուց անմիջապես հետո կամ երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ բանկային փոխանցման եղանակով:

5. Այլ դրույթներ

5.1. Անկախ պայմանագրի դրույթներից, «Կատարող» եզրույթը նշանակում է ինչպես ծառայություններ մատուցող իրավաբանական անձը, այնպես էլ նրա աշխատակիցները, որոնք միասին կամ նրանցից յուրաքանչյուրն առանձին, պատվիրատուի կողմից իրենց հասցված վնասի կամ բացթողնված օգուտի հատուցման նպատակով ունեն ինքնուրույն պահանջի իրավունք:

5.2. Սույն պայմանագրով նախատեսված բոլոր դրույթները ենթակա են մեկնաբանման նախ ՀՀ քաղաքացիական և ՀՀ մաքսային օրենսգրքերի դրույթներին, ապա՝ իրավական այլ ակտերին համահունչ: Պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը կամ հնարավոր վեճերը ենթակա են կարգավորման և լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.3. Պայմանագիրը կնքվում է երկու իրավահավասարազոր օրինակներից, տրվում են կողմերին՝ մեկական օրինակով:

6. Կողմեր

6.1. «Կատարող»
«Բիզնես Բրոք» ՍՊԸ
ՀՎՀՀ 02266139
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 10
Տնօրեն՝ Մ. Մաթևոսյան

Կ.Տ., ստորագրություն _____

6.2. «Պատվիրատու»
«ՀՀ Ներքին Գործերի Նախարարություն» ՊՄ
ՀՎՀՀ 02882913
Հասցե՝ ՀՀ, Երևան 0025, Նալբանդյան 130
ՀՀ ՖՆ Գործառնական Վարչություն
ՀՀ 900011046373

Կ.Տ., ստորագրություն _____